



# TK&PARTNERS

WEEKLY CLIENT ALERT N 29

1. Խորհրդարանական նախագծեր
2. Գառնիկ Զուլումյան՝ Ժան Գառզու

**#YourSupportTeam**  
*Collaborating firm with Andersen Global!*



Corporate  
Governance  
Center




IFLR1000

**Chambers**  
AND PARTNERS

# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ



Ազգային ժողովում շրջանավում է նախագիծ, համաձայն որի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ունեցող աշխատողի լիազորությունները կասեցման պահից մինչև կասեցման վերաբերյալ որոշման վերացումը աշխատողի աշխատատեղը (պաշտոնը) պահպանվում է:

Ընդ որում, օրինագծով նախատեսվում է, որ լիազորությունների կասեցումը խոչընդոտ չէ աշխատանքային պայմանագրի լուծման համար, եթե կասեցման ժամանակահատվածում առաջացել է աշխատանքային պայմանագրի լուծման՝ Աշխատանքային օրենսգրքով նախատեսված հիմքերից մեկը:

Նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից **առաջին** ընթերցմամբ:

Ավելին՝ [հղումով](#)

**#YourSupportTeam**  
*Collaborating firm with Andersen Global!*




Corporate  
Governance  
Center



IFLR1000

**Chambers**  
AND PARTNERS



## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒՄ

Ազգային ժողովի կողմից ընդունվել է նախագիծ, համաձայն որի՝ Բարձրագույն դատական խորհրդին տրվում է լիազորություն վարչական, քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից ընտրել դատավորներ, որոնք, ի լրումն համապատասխան մասնագիտացման գործերի, կքննեն նաև **առանձին բարդության գործեր**, որի ցանկը նույնպես սահմանվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

Նախագծով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրվել է իրավունք՝ իրենց մասնակցությամբ կոնկրետ գործով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով դիմելու Բարձրագույն դատական խորհրդին, եթե առերևույթ առկա է էական կարգապահական խախտման հիմք և պահպանված են օրենքով սահմանված ժամկետները:

Նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից **երկրորդ** ընթերցմամբ:

Ավելին՝ [հղումով](#)

## ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ


Ազգային ժողովի կողմից ընդունված նախագծով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանվել է դատական սանկցիայի նոր տեսակ, այն է՝ **որոշակի դատավարական իրավունքների իրականացման սահմանափակում**:

Արդյունքում կարող է սահմանափակվել միջնորդություն հարուցելու, բացարկ հայտնելու, ապացույցներ ներկայացնելու, վարույթի նյութերին ծանոթանալու և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելու, ելույթի, պաշտպանից հրաժարվելու և պաշտպանի լիազորությունները դադարեցնելու իրավունքները:

Ըստ նախագծի նշված դատավարական իրավունքները կարող են սահմանափակվել, եթե **անձը պարբերաբար չարաշահել է** դրանք: Սահմանափակումը դրսևորվելու է դատարանի համապատասխան որոշման տեսքով, որով սահմանվելու են այդ իրավունքների իրականացման պայմանները:

Նախագիծն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից **երկրորդ** ընթերցմամբ:

Ավելին՝ [հղումով](#)



**#YourSupportTeam**  
*Collaborating firm with Andersen Global!*



Corporate  
Governance  
Center



IFLR1000

**Chambers**  
AND PARTNERS

## ԳԱՌՆԻԿ ԶՈՒԼՈՒՄՅԱՆ՝ ԺԱՆ ԳԱՌՉՈՒ

Գառնիկ Զուլումյան՝ Ժան Գառչու ծնվել է 1907 թվականի հունավրի 1-ին Սիրիայի Հալեպ քաղաքում: 1918թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Եգիպտոս: Կրթություն է ստացել Կահիրեի Գալուստյան վարժարանում, ապա 1924թ. կրթաթոշակի շնորհիվ ուսումը շարունակել է Փարիզում: 1929թ. ավարտել է Փարիզի ճարտարապետական դպրոցը, միաժամանակ հաճախել է Մոնպառնասի Գրան Շոմիեր ակադեմիան: 1930-40-ական թվականներին նկարչի գործերը ցուցադրվել են «Գերանկախների», «Անկախների» և «Աշնանային» սալոններում: Հետևել է արվեստի նորագույն միտումներին, ստեղծել ինքնատիպ ոճի բնանկարներ, դիմանկարներ, նաստյուրմորտներ: Այս շրջանի գործերին բնորոշ են կարմիր, կանաչ, կապույտ հյութեղ մակերեսներն ու մութ ֆոները:



Զնայած նրա արվեստում դոմինանտությունը պատկանում է ուրվագծին՝ գույնը նրա համար կարևոր արտահայտչամիջոց է: Նրա հորինվածքների մեծ մասը հիմնված է գունային հարթությունների (արտացոլում են երկինքը, հողը, ծովը) և ցանցահյուս նախշերի հակադրության վրա: Լիտոգրաֆիական շարքերում փոփոխություն մտցնելով գունային համակարգում՝ նկարիչը հասնում է միևնույն հորինվածքային մոտիվի տարբեր կերպարային հնչեղությանը:

1950-ական թվականներից մեծ համբավի է արժանացել, երբ ի հայտ են եկել նկարչի մարդասիրական աշխարհայացքը, հակապատերզամական տրամադրությունները խորհրդանշող պատկերները՝ լքված ու ավերված պալատներ, նավահանգիստներ, երկաթուղային կայարաններ, որտեղ արտացոլված է ամայության և տագնապի զգացողությունը: Նրա գծանկարի կարևոր խնդիրներից է՝ արարել ինչ-որ տիեզերական տագնապի և դրախտային զգացման խորհրդավոր մթնոլորտ: Գիծը դարձել է գառզուական գեղանկարչության գլխավոր արտահայտչամիջոց:

**#YourSupportTeam**  
*Collaborating firm with Andersen Global!*



Corporate  
Governance  
Center



IFLR1000

**Chambers**  
AND PARTNERS



1966թ. առաջին անգամ այցելել է Հայաստան և հայրենիքում կազմակերպել «Ապոկալիպսիս», «Երկրային դրախտ», «Պրովանս», «Ամառային լույս» վիմագրական շարքերից կազմված անհատական ցուցահանդեսը: Հայաստանի ազգային պատկերասրահին և Ժամանակակից արվեստի թանգարանին է նվիրել 400, իսկ ի նպաստ Սպիտակի երկրաշարժից տուժած արվեստագետների՝ 50 գրաֆիկական գործեր: Երեք անգամ արժանացել է Հոլմարկի մրցանակին (1943թ., 1951թ., 1953թ.) և Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշանի: 1979թ-ից եղել է Ֆրանսիայի գեղարվեստի ակադեմիայի անդամ: Մահացել է 2000 թվականի օգոստոսի 12-ին Փարիզում:

[Աղբյուրը](#)

**#YourSupportTeam**  
*Collaborating firm with Andersen Global!*



Corporate  
Governance  
Center



IFLR1000

**Chambers**  
AND PARTNERS